

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ
ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ
ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան

«30» հունվարի 2020 թ.

Հայաստանի Հանրապետության Գիտությունների Ազգային Ակադեմիան, ի դեմս ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանի (այսուհետ՝ ՀՀ ԳԱԱ), որը գործում է ՀՀ ԳԱԱի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ ԳԱԱ Մեխանիկայի ինստիտուտը, ի դեմս տնօրենի ժ/պ Ավետիք Սահակյանի (այսուհետ՝ Կազմակերպություն) որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշումը (այսուհետ՝ Որոշում), Հաձ միջավայրի մեխանիկա ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Պայմանագրով ՀՀ ԳԱԱ պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեով նախատեսված 149875400 (հարյուր քառասունհինգ հազար ութ հարյուր յոթանասունհինգ հազար չորս հարյուր) ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:

1.2 Պայմանագրի գնի մասին համաձայնությունը, Ծրագրի առաջադրանքը, օրացուցային պլանը, նախահաշիվը և կատարողների մասին տեղեկությունները ներկայացված են Պայմանագրի հավելվածներում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1 ՀՀ ԳԱԱ իրավունք ունի՝

2.1.1 Կազմակերպությունից պահանջելու կատարել Պայմանագրի 2.4 կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2 ցանկացած ժամանակ ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.3 չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել Պայմանագրի 6-րդ մասով նախատեսված տուգանքը,

2.1.4 առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

2.1.4.1 Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

2.1.4.2 Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված Միջոցառումների իրականացման ժամկետները (նախատեսված լինելու դեպքում),

2.1.4.3 իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5 Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1 ՀՀ ԳԱԱ կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.2 Ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավելու երրորդ անձանց,

2.2.3 ՀՀ ԳԱԱ գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3 ՀՀ ԳԱԱ պարտավոր է՝

2.3.1 Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,

2.3.2 ընդունել համապատասխան որոշում՝ իրականացված Միջոցառումների մասին ներկայացված տարեկան հաշվետվության վերաբերյալ,

2.3.3 ստուգել ու ամփոփել Կազմակերպության կողմից Ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին հաշվարկները և իր եզրակացության հետ միասին դրանք ներկայացնել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ վերջինիս կողմից սահմանված կարգով և ժամկետներում:

2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1 Ծրագիրը կատարել անձամբ,

2.4.2 Ծրագիրը կատարել առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը ՀՀ ԳԱԱ հանձնել սահմանված ժամկետում,

2.4.3 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.4 կատարել ՀՀ ԳԱԱ կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.5 աշխատանքի ակնկալվող արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել ՀՀ ԳԱԱ,

2.4.6 ՀՀ ԳԱԱ ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում Պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ Հայտ)՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է Պայմանագրի շրջանակներում Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառնությունների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ,

2.4.7 Պայմանագրի նախահաշվում ֆինանսական ցուցանիշներից շեղումների դեպքում ՀՀ ԳԱԱ ներկայացնել հիմնավորում,

2.4.8 իրականացնել Ծրագրի շրջանակներում ՀՀ ԳԱԱ կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառում,

2.4.9 Ծրագրի ավարտից հետո ՀՀ ԳԱԱ ներկայացնել միջոցառումների իրականացման մասին տարեկան հաշվետվություն՝ դրան կցելով գիտական ծրագրի հաշվետվության հանձնման-ընդունման արձանագրություն,

2.4.10 Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու ՀՀ ԳԱԱ հնարավորությունը,

2.4.11 Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,

2.4.12 Պայմանագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները/խնայողությունները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 25-ը:

3 Ծրագրի ֆինանսավորման չափը

Ծրագրի ֆինանսավորման չափը կազմում է 149875400 (հարյուր քառասունինը հազար ութ հարյուր յոթանասունհինգ հազար չորս հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ՝ ԱԱՀ:

4 Մոնիթորինգ

4.1 ՀՀ ԳԱԱ ցանկացած ժամանակ կարող է իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող փաստաթղթեր և նյութեր:

4.2 Մոնիթորինգն իրականացվում է ՀՀ ԳԱԱ կամ նրա կողմից լիազորված անձի կողմից:

4.3 Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4.4 Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ և արվում են առաջարկություններ:

5 Վճարման կարգը և ժամկետները

5.1 ՀՀ ԳԱԱ Կազմակերպությանը վճարումները կատարում է Հայտն ընդունելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:

5.2 ՀՀ ԳԱԱ Պայմանագրի գինը վճարում է Պայմանագրում նշված Կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. բյուջետային տարվա 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

6 Կողմերի պատասխանատվությունը

Պայմանագրով և Ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է փոխհատուցել չիրականացված Միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված Միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: ՀՀ ԳԱԱ սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

7 Պայմանագրի գործողության ժամկետը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ՀՀ ԳԱԱ ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

8 Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՄ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9 Եզրափակիչ դրույթներ

9.1 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն է Կազմակերպության կողմից ՀՀ ԳԱԱ ներկայացված Ծրագրի հայտը:

9.3 Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10 Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՀՀ ԳԱԱ

ք. Երևան, Բաղրամյան 24

ՀՎՀՀ 00005673


Հ/հ 900011024115

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

ՀՀ ԳԱԱ Մեխանիկայի ինստիտուտը

Ք. Երևան, Բաղրամյան 24/2
1 ՏԳԲ 900018005398

Նախագահ՝


(ստորագրություն)




Տնօրենի ժ/պ՝



(ստորագրություն)



Ծրագրի գիտական ղեկավար՝


(ստորագրություն)

(ԱՎԵՏԻՔ ՍԱՀԱԿՅԱՆ)
(անուն ազգանուն)

Հավելված 1
« 30 » հունվարի 2020 թ.

N Ե-2 պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ

Մենք՝ ներքոստորագրյալներս, ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը և Կազմակերպության տնօրենի ժ/պ Ավետիք Սահակյանը, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել « 30 » հունվարի 2020 թ. N Ե-2 պայմանագրով աշխատանքի գնի վերաբերյալ՝ 149875400 (հարյուր քառասունհինգ հազար ութ հարյուր յոթանասունհինգ հազար չորս հարյուր) ՀՀ դրամ գումարի չափով:

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

ՀՀ ԳԱԱ


Կազմակերպություն

Նախագահ՝

Տնօրենի ժ/պ՝

ՌԱԴԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՎԵՏԻՔ ՍԱՀԱԿՅԱՆ



Հավելված 2
« 30 » հունվարի 2020 թ.

N Ե-2 պայմանագրի

ԱՌԱՋԱՐԴԱՆՔ
« Հոծ միջավայրի մեխանիկա » ծրագրի

1. Աշխատանքի կատարման հիմքը՝ Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջե:
2. Հայաստանում պատմականորեն զարգացած հոծ միջավայրի մեխանիկայի ավանդական ուղղությունների՝ առաձգական և առաձգամածուցիկ մարմինների մեխանիկայի, բարակապատ տարրերի, դեֆորմացվող համակարգերի և կապակցված դաշտերի փոխազդեցության մեխանիկայի, ինչպես նաև փորձարարական մեխանիկայի հետազոտության զարգացումն ու արդիականացումը:
3. Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները (մինչև 1 էջ):
Ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքները պետք է բավարարեն միջազգային բարձր չափանիշներին՝ լինեն նոր, արդիական, պարունակեն գիտական նորույթ: Մեխանիկայի տեսանկյունից լինեն խորը վերլուծություններով և եզրակացություններով հարուստ:
4. Աշխատանքի բովանդակությունը (մինչև 3 էջ):
Առաձգական և առաձգամածուցիկ մարմինների մեխանիկայի բաժնում նախատեսվում է կատարել հետևյալ գիտահետազոտական աշխատանքները:
 1. Առաձգականության տեսության հարթ և առանցքահամաչափ խնդիրներում լարվածային վիճակների միջև առնչությունների դասակարգում և դրա հիման վրա համապատասխանության սկզբունքի ձևակերպում:
 2. Ստրիկներների և դեֆորմացվող հոծ մարմինների կոնտակտային փոխազդեցության խնդիրների դրվածքների դասակարգում և համամետական վերլուծություն:
 3. Դեֆորմացվող մարմիններում ճաքերի կամ բարակապատ ներդրակների առկայությամբ դինամիկական խնդիրների հետազոտություն:
 4. Դեֆորմացվող հոծ մարմինների ու ստրիկներների, բարակապատ ներդրակների և դրոշմների տիպի լարումների կենտրոնացուցիչների փոխազդեցության վերաբերյալ կոնտակտային և խառը եզրային խնդիրների հետազոտություն:

5. Առաձգամածուցիկության տեսության դրվածքով կոնտակտային և խառը եզրային գծային և ոչ գծային խնդիրների ուսումնասիրություն:
6. Վլասով-Բուֆերի մեթոդով բազմաշերտ առաձգական կիսահարթության տեսքով կոմպոզիտի լարվածադեֆորմացիոն վիճակի հետազոտություն:
7. Ոլորման ժամանակ առաձգական տարածության լարվածային վիճակը շրջանաձև ճաքի և բարակ շրջանաձև ներդրակի առկայությամբ:
8. Հիպերսինգուլյար ինտեգրալ հավասարումների բերվող կոնտակտային և խառը եզրային խնդիրների ուսումնասիրության շարունակում:
9. Նախատեսված խնդիրները նկարագրող ինտեգրալ հավասարումների լուծման վերլուծական և թվային-վերլուծական մեթոդների զարգացում և կատարելագործում:
10. Նախատեսվում է զարգացնել ինտեգրալ հավասարումների լուծման մեխանիկական քառակուսացման եղանակը ավելի բարդ դրվածքով խնդիրների լուծման համար: Մասնավորապես, նշված եղանակով լուծել միջֆազային ճաքի վերաբերյալ խնդիրներ Կոմինոտի դրվածքով, երբ ենթադրվում է, որ ճաքի զագաթների մոտ ափերը հպվում են իրար շփումով կամ առանց: Նախատեսվում է նաև աղբադառնալ դինամիկ խնդիրների որոշիչ հավասարումների լուծմանը, նույնպես օգտագործելով մեխանիկական քառակուսացման բանաձևերը: Նշված հարցերի հետազոտությունը թելադրված է տեսական ընդհանրացումներ անելու և ստացված արդյունքների կիրառական նշանակությունը ապահովելու անհրաժեշտությամբ:
11. Կոնտակտային ճաք պարունակող եռաշերտ կառուցվածքի լարվածադեֆորմացիոն վիճակը:

Բարակապատ համակարգերի մեխանիկայի բաժնում նախատեսվում է կատարել հետևյալ գիտական ուսումնասիրությունները.

1. Բազմաշերտ օրթոտրոպ սալերից և թաղանթներից բաղկացած փաթեթի համար, ջերմային դաշտի ազդեցության և շերտերի քաշի հաշվառումով, առաձգականության տեսության եռաչափ խնդիրների նոր դասի լուծում: Կոնտակտային ժամանակակից սեյսմոլոգիայում մեծ պահանջարկ ունեցող քվադրատիկ և դինամիկական խնդիրներ, մասնավորապես, երբ չափիչ սարքերը տեղադրված են փաթեթի դիմային մակերևույթից որոշ խորության վրա: Կուսումնասիրվեն այն դեպքերը, երբ որոշ շերտերի միջև հնարավոր է լրիվ կոնտակտի պոկում: Կորոշվի փաթեթում կուտակված դեֆորմացիայի պոտենցիալ էներգիան, կգնահատվի սպասվող հնարավոր երկրաշարժի մագնիտուդը: Կուսումնասիրվեն դինամիկական պրոցեսները:
2. Ասիմպտոտիկ մեթոդի կիրառմամբ ստանալ անիզոտրոպ երկշերտ գլանային թաղանթի եռաչափ խնդրում ներքին խնդրի լուծումը, երբ թաղանթի արտաքին և ներքին մակերևույթների վրա տրված են առաձգականության տեսության խառը եզրային պայմաններ, իսկ շերտերի միջև լրիվ կոնտակտի պայմաններ: Կատարել լարվածա-դեֆորմացիոն վիճակի վերլուծություն:
3. Ուսումնասիրել սֆերիկ կամ գլանային թաղանթներից բաղկացած շերտավոր փաթեթի համար ոչ դասական դինամիկական խնդիրները՝ տարբեր եզրային պայմանների դեպքում: Կարևորագույն կառուցվածքների (ատոմակայաններ, ջրամբարներ և այլ) հիմքերի և հիմնատակերի վրա սեյսմիկ ալիքների (երկրաշարժ) ազդեցությունների ուսումնասիրություն: Ռեզոնանսի առաջացման և այն բացառելու պայմանների արտածում:
4. Ստիպողական տատանումների տարածական առաջին եզրային խնդրի լուծում եռաշերտ օրթոտրոպ սալի համար՝ շերտերի միջև կոնտակտի տարբեր պայմանների դեպքում, երբ շերտերն օժտված են ներքին դիմադրությամբ:

կառուցման հնարավորությունները օպտիմալության տարբեր հայտանիշների և սահմանափակումների դեպքում: Մասնավոր դեպքերում կհետազոտվեն օպտիմալ սինթեզի խնդիրներ մատակարարման պրոցեսում, կկառուցվեն ղեկավարող ազդեցությունները ու օպտիմալ հետազոտությունները տարբեր տիրույթներից:

19. Դինամիկ համակարգերի մաթեմատիկական նոր մոդելների համար ուսումնասիրել ղեկավարման, դիտման և կոնֆլիկտային իրավիճակների հիմնարար հարցեր, ինչպես նաև մշակել նրանց համար տարբեր խնդիրների լուծման նոր կամ մոդիֆիկացված եղանակներ:

20. Շարունակել ուսումնասիրել փոփոխական կառուցվածքով (էտապ առ էտապ փոփոխվող, կապակցված, հիբրիտ և այլ) ոչ ստացիոնար և ստացիոնար համակարգերի ղեկավարման, օպտիմալ ղեկավարման և դիտման նոր խնդիրներ: Ենթադրվում է մշակել այդպիսի գծային համակարգերի ղեկավարման և օպտիմալ ղեկավարման խնդիրների լուծման կոսնտրուկտիվ եղանակներ և ստացված արդյունքների կիրառմամբ լուծել կոնկրետ մեխանիկական համակարգերի համար այդպիսի խնդիրներ:

21. Կենտրոնացված պարամետրերով համակարգերի համար ստացված արդյունքների կիրառմամբ լուծել բաշխված պարամետրերով տարբեր համակարգերի (հեծան, մեմբրան և այլ) ղեկավարման և օպտիմալ ղեկավարման խնդիրներ ժամանակի միջանկյալ պահերին ճկվածքի ֆունկցիայի կամ նրա փոփոխման արագության վրա դրված չանջատվող (ոչ լոկալ) պայմաններով, ինչպես նաև միաժամանակ ճկվածքի ֆունկցիայի և նրա փոփոխման արագության վրա չանջատվող (ոչ լոկալ) պայմաններով:

Դեֆորմացվող համակարգերի և կապակցված դաշտերի դինամիկայի բաժնում նախատեսվում են հետազոտություններ հետևյալ ուղղություններով.

1. Փոխկապակցված առաձգական միջավայրի, բաղադրյալ կառուցվածքային անհամասեռությունների, ինչպես նաև արտաքին միջավայրի ազդեցություններով պայմանավորված, փոխկապակցված էլեկտրա-մագնիսա-մեխանիկական երևույթների մոդելավորումը խառը եզրային պայմաններով մաթեմատիկական խնդրի տեսքով:

2. Առաձգական նյութից պատրաստված էլեմենտների, կառուցվածքային անհամասեռությունների հաշվառումով, էլեկտրա-մագնիսա-առաձգական կապակցված նոր լարվածա-դեֆորմացիոն վիճակների ուսումնասիրություն:

3. Բնական երևույթների, բիոմեխանիկական կառուցվածքների և դրանց էլեմենտների էլեկտրա-մագնիսա-մեխանիկական մոդելավորումներ: Խառը եզրային պայմաններով մաթեմատիկական նոր խնդիրների ձևակերպում:

4. Բացահայտված դինամիկ պրոցեսների լավարկում (օպտիմիզացիա) կամ պրոցեսի ղեկավարում ըստ երևույթը ծնող բնութագրիչ ազդեցությունների ֆիզիկամեխանիկական մեծությունների:

5. Գազահեղուկ միջավայրերում և/կամ էլեկտրամագնիսական դաշտերում առաձգական բարակապատ մարմինների փոխազդեցության դինամիկայի ուսումնասիրության խնդիրներ:

6. Երկրաչափական և ֆիզիկական ոչ գծայնությունների տարբերակումով և համադրությամբ, էլեկտրաառաձգականության ոչ գծային խնդիրներում ալիքների տարածման ուսումնասիրություն:

Փորձարարական հետազոտությունների լաբորատորիայում նախատեսվում է կատարել հետևյալ հետազոտությունները՝

1. Հարթ և տարածական վիճակների դեպքերում ուսումնասիրվելու են ցիկլիկ բեռնավորման ենթարկվող մետաղակոմպոզիտային միացությունների կրողականությունը հոգնածային

ամրության երկարակեցության և հուսալիության հաշվառմամբ: Դիֆերենցիալ հավասարումներում ոչ գծային իներցիոն ուժերի և 9-ը բալանոց երկրաշարժերի միջինացված օսցիլոգրամների հաշվառմամբ թվային ծրագրման եղանակով հետազոտվելու է բարձրահարկ շենքերի և շինությունների սեյսմակայունությունը:

2. Շարունակվելու են ուսումնասիրությունները ձևախախտվող մարմնի նախնական առաձգական միջավայր միարժան գործընթացի վրա ուղեկցող պարպման հոսանքի բնութագրիչների ազդեցության հետազոտման բնագավառում:

3. Հայտնի տվյալների համեմատական վերլուծության հիման վրա վեր են հանվելու ոլորմամբ, ինչպես նաև առանցքային ձգմամբ կրկնվող- ստատիկ և հաստատուն ռեժիմներով բեռնավորվող ապակեպլաստե խողովակների մոտ առաջացող համապատասխանաբար ամպլիտուդային և սողքի դեֆորմացիաների միջև եղած առնչությունները:

4. Շարունակվելու են ուսումնասիրությունները կրկնվող-ստատիկ միառանցք և բարդ բեռնավորման պայմաններում տարբեր պրոֆիլնոր ունեցող ապակեպլաստե հոծ և սոսնձմամբ ստացված շերտավոր փորձանմուշների դեֆորմացման վարքի հետազոտման բնագավառում:

5. Ուսումնասիրվելու է դետորբցիոն պրոցեսների ազդեցությունը ցեմենտագրունտների ամրության և տարբեր լարումների առկայության պայմաններում սողքի ենթարկվելու հատկությունների վրա:

6. Միաեարթակ կտրման և ոլորման սահքի փորձարկման մեթոդներով ուսումնասիրվելու են տարբեր գրունտներից կազմած փորձանմուշների սահքին դիմադրելու և սահքային սողքի զարգացման օրինաչափությունները: Կատարվելու են հոսուն-պլաստիկ, փափուկ-պլաստիկ կոնսիստենցիայով կավային գրունտների վիբրոդինամիկ ուսումնասիրություններ:

7. Կոնստրուկտիվ առաձգական բաղադրյալ կառուցվածքներում՝ սալերում, կիսատարածություններում, անվերջ և կիսաանվերջ բարակապատ վերադիրներից ուժի փոխանցման խնդիրներ: Կուսումնասիրվեն կոնսոակտային խնդիրներ կոնսոակտի տեղամասում շոշափող լարումների որոշման համար: Բաղադրյալ տիրույթներում կհետազոտվեն տեղափոխությունների ալիքային դաշտերը՝ պայմանավորված խառը եզրային պայմաններով և տարածվող ալիքներով:


8. Կշարունակվեն երկաթբետոնե հիմնակմախքով շենքերում սյուների արդյունավետ ուժեղացումներին վերաբերող լաբորատոր փորձարկումները: Իրականացվելու են ՀՀ-ում մի շարք դպրոցական շենքերի տեխնիկական վիճակի ուսումնասիրություններ: Կատարված ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա նախատեսվում է կատարել դպրոցական շենքերի ուժեղացման և վերակառուցման կոնստրուկտիվ լուծումների մշակման աշխատանքներ:


9. Ժառանգականության տեսության կիրառմամբ կշարունակվեն 2019թ.-ին սկսած թերմոդինամիկական մոտեցման շրջանակներում պարբերական բեռնավորման ժամանակ ցիկլի ընթացքում էնտրոպիայի փոփոխության ուսումնասիրությունները:

Կազմակերպության տնօրենի ժ/պ՝


(ստորագրություն) (ԱՎԵՏԻՔ ՍԱՀԱԿՅԱՆ)

Ծրագրի գիտական ղեկավար՝


(ստորագրություն) (ԱՎԵՏԻՔ ՍԱՀԱԿՅԱՆ)



Հավելված 3
« 30 » հունվարի 2020 թ.
N Ե-2 պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ ¹
«Հոծ միջավայրի մեխանիկա» ծրագրի
(ծրագրի անվանումը)

Խ/հ	Բրականացվելիք միջոցառման					կատարման կազմակերպողը	պահանջվող գումարը (հազար դրամ)
	անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառնությունների նկարագրիրը	ակնկալվող արդյունքները	կատարման ժամկետները		
1.	Առաձգական առաձգամածուցիկ մարմինների մեխանիկա	1. Առաձգականության և տեսության հարթ առանցքահամաչափ խնդիրներում լարվածային միջին առնչությունների դասակարգում և դրա հիման վրա համապատասխանության սկզբունքի ձևակերպում: 2. Ստրինգներների դեֆորմացվող մարմինների կոնտակտային փոխազդեցության խնդիրների դրվածքների դասակարգում և	Դրված խնդիրների եղանակների ներառությունը մշակումը, նրանց թվային-լարվածային կամ թվային ստացված արդյունքների լուծումների կառուցումը, կիրառական ինչպես նաև քայքայող նշանակությունը լարումների փոփոխման ապահովելու օրինաչափությունների բացահայտումն ու նրանց աճը սահմանափակող կանխարգելիչ միջոցառումների մշակումը:	Դրված խնդիրների նշանակությունը հարցերի	01.01.2020-31.12.2020	37469.4	

¹ Բրականացվելիք միջոցառումները ներկայացնել եռամսյակային փուլերով

					համամետական վերլուծություն: 3. Դեֆորմացվող մարմիններում ճաքերի կամ բարակապատ ներդրակների առկայությամբ դինամիկական խնդիրների հետազոտություն: 4. Դեֆորմացվող հոծ մարմինների ու ստրինգերների, բարակապատ ներդրակների և դրոշմների տիպի լարումների կենտրոնացուցիչների փոխադեցության վերաբերյալ կոնտակտային և խառը եզրային խնդիրների հետազոտություն: 5. Առաձգամոնոցիկլության տեսության դրվածքով կոնտակտային և խառը եզրային զծային և ոչ զծային խնդիրների ուսումնասիրություն: 6. Վլասով-Բուֆերի մեթոդով բազմաշերտ առաձգական կիսահարթության տեսքով կոմպոզիտի լարվածադեֆորմացիոն վիճակի հետազոտություն: 7. Ոլորման ժամանակ առաձգական տարածության
--	--	--	--	--	---

				լարվածային վիճակը շրջանաձև ճաքի և բարակ շրջանաձև ներդրակի առկայությամբ: 8. Հիպերտրոֆիկ ինտեգրալ հավասարումների բերվող կոնտակտային և խառը եզրային խնդիրների ուսումնասիրության շարունակում: 9. Նախատեսված խնդիրները նկարագրող ինտեգրալ հավասարումների լուծման վերլուծական և թվային-վերլուծական մեթոդների զարգացում և կատարելագործում: 10. Նախատեսվում է զարգացնել ինտեգրալ հավասարումների լուծման մեխանիկական քառակուսացման եղանակը ավելի բարդ դրվածքով խնդիրների լուծման համար: Մասնավորապես, նշված եղանակով լուծել միջֆազային ճաքի վերաբերյալ խնդիրներ Կոմինտուի դրվածքով, երբ ենթադրվում է, որ ճաքի զազաթների մոտ ափերը հպվում են իրար շփումով կամ առանց: Նախատեսվում է նաև աղբյուրաձև դիսսիպ
--	--	--	--	--

2.	Բարակապատ համակարգերի մեխանիկա	խնդիրների որոշիչ հավասարումների լուծմանը, նույնպես օգտագործելով մեխանիկական քառակուսացման բանաձևերը: 1. Բազմաշերտ օրթոտրոպ սալերից և թաղանթներից բաղկացած փաթեթի համար, ջերմային դաշտի ազդեցության տակ և 2 շերտերի հաշվառումով առաձգականության տեսության եռաչափ խնդիրների նոր դասի լուծում: Կոնստրուկտիվ մեծ սկզբնական փափագի պահանջարկ ունեցող քվադրատիկ և դինամիկական խնդիրներ, մասնավորապես, երբ չափիչ սարքերը տեղադրված են փաթեթի դիմախի մակերևույթից որոշ խորության վրա: Կուսումնասիրվեն այն դեպքերը, երբ որոշ շերտերի միջև հնարավոր է լրիվ կոնտակտի պրկում: Կորոշվի փաթեթում կուտակված դեֆորմացիայի պոտենցիալ էներգիան, կգնահատվի սպասվող հնարավոր երկրաշարժի մագնիսադր: Կուսումնասիրվեն դինամիկական պրոցեսները: 2. Ուսումնասիրել սֆերիկ	Խնդիրների որոշիչ հավասարումների լուծում, հավասարումների լուծում, քառակուսացման բանաձևերը: Մասնավորապես, երբ չափիչ սարքերը տեղադրված են փաթեթի դիմախի մակերևույթից որոշ խորության վրա: Կուսումնասիրվեն այն դեպքերը, երբ որոշ շերտերի միջև հնարավոր է լրիվ կոնտակտի պրկում: Կորոշվի փաթեթում կուտակված դեֆորմացիայի պոտենցիալ էներգիան, կգնահատվի սպասվող հնարավոր երկրաշարժի մագնիսադր: Կուսումնասիրվեն դինամիկական պրոցեսները:	01.01.2020-31.12.2020 34471.1
----	--------------------------------	---	--	---

		կամ գլանային թաղանթներից բաղկացած շերտավոր փաթեթի համար ոչ դասական դինամիկական խնդիրները տարբեր եզրային պայմանների դեպքում: Կարևորագույն կառուցվածքների (ատոմակայաններ, ջրամբարներ և այլ) հիմքերի և հիմնատակերի վրա սեյսմիկ ակիքների (երկրաշարժ) ազդեցությունների ուսումնասիրություն: Ռեգրանաի առաջացման և այն բացառելու պայմանների արտածում:	դեպքում կառացվի օպտիմալ կտրվածքի տեսքը, որի դեպքում կառացվի առաջին կրիտիկական ուժի մեծագույն արժեքը:	
		3. Ստիպողական տատանումների տարածական առաջին եզրային խնդրի լուծում եռաչերտ օրթոտրոպ սալի համար շերտերի միջև կոնտակտի տարբեր պայմանների դեպքում, երբ շերտերն օժտված են ներքին դիմադրությամբ:	«Wolfram Mathematica» ծրագրային փաթեթի կիրառմամբ փոփոխական առաձգականության գործակիցներով սալի սահմանային լարվածադեֆորմացիոն վիճակի՝ գրաֆիկական և ներկայացումը կանցկացվի վերլուծություն խնդրի երկչափ և եռաչափ դրվածքների դեպքում:	
		4. Հստ հաստության բևեռացված երկչերտ պիեզակերամիկական սալի լարվածա-դեֆորմացիոն վիճակի ուսումնասիրություն, երբ սալը բևեռացված է ըստ խաստության, դիմային մակերկրյությունից մեկի վրա տրված են էլեկտրական դաշտի պոտենցիալը և առաձգականություն		

				տեսության առաջին եզրային խնդրի պայմանները, իսկ հակադիր դիմային մակերևույթի վրա՝ խառը եզրային պայմաններ:
				5. Հեծանների, սալ-շերտերի և թաղանթերի ընդլայնական ծուն, կայունության և տատանման խնդիրներ՝ տարբեր եզրային պայմանների, այդ թվում առաձգական ամրակցման հենարանի դեպքում:
				6. Տրված ծավալի և տրված երկարության փոփոխական օպտիմալ կտրվածքով օրթոտրոպ կայունության խնդիրների ուսումնասիրության շարունակություն՝ ա) ռադիակայուն կտրվածքի դեպքում բ) շրջանային կտրվածքի դեպքում
				7. Փոփոխական հաստության շրջանային փակ կտրվածքով օրթոտրոպ թաղանթի առանցքախմբերիկ սեփական տատանումների հաճախության կախվածությունը թաղանթի ծայրերում կիրառված ձգող կամ սեղմող ուժերից և օրթոտրոպ թաղանթի կայունության հարցեր:
				8. Ռելեյի տիպի ալիքները

				կիսաստարածություն-շերտ համակարգում ջերմային դաշտի առկայությամբ: 9. Փոփոխական առաձգականության գործակիցներով սալ-շերտի սահմանային լարվածադեֆորմացիոն վիճակի ուսումնասիրություն ծավալային ուժերի բացակայության կամ առկայության դեպքում. 10. Փոփոխական Ցունգի մորուլներով և Պուասսոնի գործակիցներով օրթոտրոպ սալի* սահմանային շերտի լարվածադեֆորմացիոն վիճակի ուսումնասիրություն: Առաձգականության տեսության եռաչափ, դինամիկ դրվածքով խնդրի լուծում: 11. Առաձգականության գրադիենտայն տեսության հարթ խնդրի հավասարումների համակարգի և եզրային պայմանների ասիմպտոտիկ վերլուծություն: 12. Կղիտարկվի եզրերում կռշտ սեղմված և հակասիմետրիկ սիմետրիայի առանց-քների նկատմամբ արտաքին ճնշումով բեռնավորված ուղղանկյուն սալի ծռման խնդիրը: Նշված խնդրի լուծման հանգեցումը
--	--	--	--	---

				անվերջ հանրահաշվական հավասարումների ռեզուլյար համակարգի: 13. Ուղղանկյուն, իզոտրոպ, եզրերում կոշտ սեղմված և կամայական մակերեսային արտաքին ճնշումով բեռնավորված սալի ծռման խնդրի լուծում: 14. Նշված սալի ներսի (Ճ,Պ) կետում կենտրոնացված ուժով բեռնավորման դեպքում ծող մոմենտների (Ճ,Պ) կետի շրջակայքում սահմանային վարքի ուսումնասիրություն: 15. Կուսումնասիրվեն մանիպուլյատորի միջոցով շարժական և անշարժ օբյեկտների (ազատ և ֆիկսված հերթականությամբ) մատակարարման խնդիրների ընդհանրական մաթեմատիկական մոդելներ: Մատակարարման մաթեմատիկական մոդելներում հաշվի կառնվեն դեկավրվող մանիպուլյատորի կոնստրուկտիվ առանձնահատկությունները, ինչպես նաև հնարավոր արտաքին ազդեցությունները: Տարբեր մոդելների ու դեկավրումների դեպքում
--	--	--	--	---

				կիւնտագրուվեն խնդիրների լրիվ ղեկավարելիության պայմաններն ու օպտիմալ ղեկավարման ալգորիթմների կառուցման ինարավորությունները օպտիմալության տարբեր հայտանիշների սահմանափակումների դեպքում: Մասնավոր դեպքերում կիւնտագրուվեն օպտիմալ սինթեզի խնդիրներ մատակարարման պրոցեսում, կկառուցվեն ղեկավարող ագրեցությունները ու օպտիմալ կետագծերը տարբեր սիրայթերից: 16. Դիսամիկ համակարգերի մաթեմատիկական նոր մոդելների համար ուսումնասիրել ղեկավարման, դիտման և կոնֆլիկտային իրավիճակների հիմնարար հարցեր, ինչպես նաև վշակել նրանց համար տարբեր խնդիրների լուծման նոր կամ մոդիֆիկացված եղանակներ: 17. Շարունակել ուսումնասիրել փոփոխական կառուցվածքով (էտապ առ էտապ փոփոխվող, կապակցված, հիբրիտ և այլ) ոչ ստացիոնար և ստացիոնար համակարգերի ղեկավարման, օպտիմալ ղեկավարման և դիտման նոր խնդիրներ:
--	--	--	--	---

		Ենթադրվում է մշակել այդպիսի համակարգերի ղեկավարման և օպտիմալ խնդիրների լուծման կրանտուկտիվ եղանակներ և ստացված արդյունքների կիրառմամբ լուծել կոնկրետ մեխանիկական համակարգերի համար այդպիսի խնդիրներ:			
3.	Դեֆորմացվող համակարգեր կապակցված դաշտեր	1. Փոխկապակցված և առաձգական միջավայրի, բաղադրյալ կառուցվածքային անհամասեռությունների, ինչպես նաև արտաքին միջավայրի ազդեցություններով	Խնդիրների դրվածքների, խտակեցում, որոշիչ հավասարումների ստացում, դրանց հետազոտումը անալիտիկ կամ թվային մեթոդներով: Ստացված արդյունքների	01.01.2020-31.12.2020	55454.2

			պայմանավորված, համակարգում: փոխկապակցված էլեկտրամագնիսա-մեխանիկական երևույթների մոդելավորումը խառը եզրային պայմաններով մաթեմատիկական խնդրի տեսքով: 2. Առաձգական նյութից պատրաստված էլեմենտների, կառուցվածքային անհամաեությունների հաշվառումով, էլեկտրամագնիսա-առաձգական կապակցված նոր լարվածադեֆորմացիոն վիճակների ուսումնասիրություն: 3. Բնական երևույթների, բիոմեխանիկական կառուցվածքների և դրանց էլեմենտների էլեկտրամագնիսա-մեխանիկական մոդելավորումներ: Խառը եզրային պայմաններով մաթեմատիկական նոր խնդիրների ձևակերպում: 4. Բացահայտված դինամիկ պրոցեսների լավարկում (օպտիմիզացիա) կամ պրոցեսի դեկավարում ըստ երևույթի ծնող բնութագրիչ ազդեցությունների ֆիզիկամեխանիկական մեծությունների: 5. Գազահեղուկ միջավայրերում և/կամ էլեկտրամագնիսական
--	--	--	---

		դաշտերում առաձգական ֆարակալատ մարմինների փոխադրության դինամիկայի ուսումնասիրության խնդիրներ. 6. Երկրաչափական և ֆիզիկական ոչ գծայնությունների տարբերակումով և համադրությամբ, էլեկտրա-առաձգականության ոչ գծային խնդիրներում ալիքների տարածման ուսումնասիրություն:			
4.	Փորձարարական հետազոտություններ	1. Հարթ և տարածական վիճակների դեպքերում հստակեցում, որոշիչ տեսության կիրառմամբ ուսումնասիրվելու են ցիկլիկ հավասարումների բեռնավորման ենթարկվող ստացում, դրանց սկզբնական մոտեցման շրջանակներում մետաղական պոլիտային հետազոտումը անալիտիկ մոտեցման շրջանակներում միացությունների կամ թվային մեթոդներով: պարբերական բեռնավորման կրողականությունը ժամանակ ցիկլի ընթացքում հոգնածային արդյունքների լինողության փոփոխության հոգնածային ամրության համակարգում: Երկարակեցության և հուսալիության հաշվառմամբ: Դիֆերենցիալ հավասարումներում ոչ գծային իներցիոն ուժերի և 9-րդ փալանոց երկրաշարժերի միջինացված օսցիլոգրամների թվային հաշվառմամբ եղանակով ծրագրման հետազոտվելու է բարձրահարկ շենքերի և շինությունների սեյսմակայունությունը: 2. Շարունակվելու են ուսումնասիրությունները	Ինդիքների դրվածքների ժառանգականության որոշիչ տեսության կիրառմամբ կշարունակվեն 2019թ.-ին դրանց սկզբնական մոտեցման շրջանակներում անալիտիկ մոտեցման շրջանակներում պարբերական բեռնավորման ժամանակ ցիկլի ընթացքում կնտրոլային փոփոխության ուսումնասիրությունները: Շարունակվելու են ուսումնասիրությունները կրկնվող-ստատիկ միառանցք և բարդ բեռնավորման պայմաններում տարբեր պրոֆիլներ ունեցող ապակեպլաստե հոծ և սունձմամբ ստացված շերտավոր փորձանմուշների դեֆորմացման վարքի հետազոտման բնագավառում:	01.01.2020-31.12.2020	22480.7


	ձևախախտվող մարմնի նախնական առաձգական միջավայր միքլան գործընթացի վրա ուղեկցող պարպման հոսանքի բնութագրիչների ազդեցության հետազոտման բնագավառում: 3. Հայտնի տվյալների իմամտական վերլուծության փինան վրա վեր են հանվելու ոլորմամբ, ինչպես նաև առանցքային ձգմամբ կրկնող-ստատիկ և հաստատուն ժեժիմներով բեռնավորվող ապակեպլաստե խողովակների մոտ առաջացող իմամպատակամաբար անպլիտություն և սողքի դեֆորմացիաների միջև եղած առնչությունները: 4. Ուսումնասիրվելու է դետրբջիոն պրոցեսների ազդեցությունը ցեմենտագրունտների ամրության և տարբեր լարումների առկայության պայմաններում սողքի ենթարկվելու հատկությունների վրա: 5. Միահարթակ կտրման և ոլորման սանքի փորձարկման մեթոդներով ուսումնասիրվելու են տարբեր գրունտներից կազմած փորձանմուշների սանքին դիմադրելու և սանքային սողքի զարգացման
--	---

				օրինաչափությունները: Կատարվելու են հոսուն- պլաստիկ, փափուկ-պլաստիկ կունսիստենցիայով կավային գրունտների վիբրոդինամիկ ուսումնասիրություններ: 6. Կղիտարկվեն առաձգական բաղադրյալ կառուցվածքներում՝ սալերում, կիսատարածություններում, անվերջ և կիսանվերջ բարակապատ վերադիրներից ուժի փոխանցման խնդիրներ: Կուսումնասիրվեն կոնսոսկոտային խնդիրներ կոնսոսկոտի տեղամասում 2ռ2ափող լարումների որոշման համար: Բաղադրյալ տիրույթներում կհետազոտվեն տեղափոխությունների ալիքային դաշտերը՝ պայմանավորված խառը եզրային պայմաններով և տարածվող ալիքներով: 7. Կշարունակվեն երկաթբետոնե հիմնակախթով շենքերում սյուների արդյունավետ ուժեղացումներին վերաբերող լաբորատոր փորձարկումները: Իրականացվելու են ՀՀ-ում մի շարք դպրոցական շենքերի տեխնիկական վիճակի ուսումնասիրություններ: Կատարված ուսումնասիրությունների
--	--	--	--	---

		արդյունքների հիման վրա նախատեսվում է կատարել դպրոցական շենքերի և ուժեղացման վերակառուցման կոնստրուկտիվ լուծումների մշակման աշխատանքներ:					149875.4
Ընդամենը							

Կազմակերպության

Տնօրենի ժ/պ


(ստորագրություն)

(ԱՎԵՏԻՔ ՄԱՀԱԿՅԱՆ)

Ծրագրի գիտական ղեկավար՝




(ստորագրություն)

(ԱՎԵՏԻՔ ՄԱՀԱԿՅԱՆ)

N Ե-2 պայմանագրի

հազարը դրամ

Հ/հ	Հոդվածի անվանումը	Ֆինանսավորման ծավալը	այդ թվում՝			
			1-ին եռամսյակ (20%)	2-րդ եռամսյակ (25%)	3-րդ եռամսյակ (25%)	4-րդ եռամսյակ (30%)
1	Աշխատավարձ	136913,4	27382,68	34228,35	34228,35	41074,02
2	տնտեսական և այլ ծախսեր*	12962,0	2592,4	3240,5	3240,5	3888,6
ԸՆԴԱՄԵՆԸ		149875,4	29975,08	37468,85	37468,85	44962,62

Alaah

Ա. Վ. Սահակյան

W. W. W. W.

Մ.Մ. Մարտիրոսյան



* Բուհերում իրականացվող ծրագրերի համար նախատեսել ծրագրի ֆինանսավորման առնվազն 3%-ը, մյուս գիտական կազմակերպություններում իրականացվող ծրագրերի համար՝ առնվազն 5%-ը



Գործադրողի պաշտոնը զբաղեցնող անհատի անունը և գրանցման համարը

(Ս.Ս. Գրանցման համարը)

[Handwritten signature]

Կրթության նախարարության
համակարգիչի միջոցով

Ս.Ս. Գրանցման համարը

[Handwritten signature]

Կրթության նախարարության տնօրենի ժ/պ

Զ/Կ	Փյունիկայի համալսարան	Գրանցման համարը
1.	Գրանցման համարը, այդ թվում՝	6700
	Կրթության նախարարության տնօրենի ժ/պ	1500
	Կրթության նախարարության տնօրենի ժ/պ	3000
	Կրթության նախարարության տնօրենի ժ/պ	700
	Կրթության նախարարության տնօրենի ժ/պ	1250
	Կրթության նախարարության տնօրենի ժ/պ	250
2.	Կրթության նախարարության տնօրենի ժ/պ	500
3.	Կրթության նախարարության տնօրենի ժ/պ	2612
4.	Կրթության նախարարության տնօրենի ժ/պ	200
5.	Կրթության նախարարության տնօրենի ժ/պ	200
6.	Կրթության նախարարության տնօրենի ժ/պ	250
7.	Կրթության նախարարության տնօրենի ժ/պ	300
8.	Կրթության նախարարության տնօրենի ժ/պ	250
9.	Կրթության նախարարության տնօրենի ժ/պ	400
10.	Կրթության նախարարության տնօրենի ժ/պ	350
11.	Կրթության նախարարության տնօրենի ժ/պ	800
12.	Կրթության նախարարության տնօրենի ժ/պ	400
	Կրթության նախարարության տնօրենի ժ/պ	12962

Կրթության նախարարության տնօրենի ժ/պ

ՆԵ-2 պայմանագրի

Հանձնարարության 4.1
2020 թ.

« 30 »